ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի և Լևոն Դոխոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-636-13.10.2014-ԳԿ-010/0*) վերաբերյալ:

Նախագիծը հակասում է «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքով:

Բակալավրի կրթական ծրագրով պետական և ոչ պետական բուհերում ընդունելությունը միասնական քննությունների համակարգով և մրցութային հիմունքներով իրականացնելը հնարավորություն է տալիս դիմորդների գիտելիքների ստուգման գործընթացն իրականացնելիս նրանց համար ապահովել միևնույն պայմանները, իսկ բուհերը համալրել այնպիսի ուսանողներով, ովքեր հաղթահարել են ընդունելության քննությունների դրական շեմը:

Միաժամանակ, հաշվի առնելով գյուղական համայնքների պահպանման ու զարգացման, գյուղատնտեսության արտադրության նախատեսված աճի ապահովման և տեղի կադրերով գյուղական համայնքների ապահովման հիմնախնդիրների հրատապությունը՝ ագրոպարենային համակարգի որոշ մասնագիտությունների համար 2014-2015 ուսումնական տարում փորձնական կարգով Հայաստանի ազգային ագրարային համալսարանում սահմանվել է ուսանողների ընդունելության պարզեցված համակարգ՝ դիմորդներին հնարավորություն տալով անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցել՝ հանձնելով մեկ միասնական քննություն, իսկ վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցել՝ միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի գնահատականներով:

Նմանատիպ մոտեցում կարելի է ցուցաբերել նաև այն մասնագիտությունների համար, որոնց նկատմամբ դիմորդների հետաքրքրությունը նվազել է, սակայն այդ մասնագիտությունների գծով կադրերն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության տնտեսության հետագա զարգացման համար:

Դրա հետ մեկտեղ կան մի շարք մասնագիտություններ, այդ թվում նաև պետության համար առաջնային ու կարևորություն ներկայացնող բնագավառներում (օրինակ՝ ՏՀՏ ոլորտում), որոնց ընդունելության մրցույթի ժամանակ լինում է բարձր մրցակցություն և հիշյալ մասնագիտությունների համար մրցութային քննություններ չսահմանելը նպատակահարմար չէ:

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի (փոփ., լրաց. 19.05.14 ՀՕ-23-Ն)՝ հստակեցվել են այն տարակարգերը, որոնց պատկանող ուսանողները կարող են օգտվել որոշակի զեղչերից:

Բացի դրանից, բարձրագույն ուսումնական հաստատությունը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 7 տոկոսի չափով, իր միջոցների հաշվին, հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, տալիս է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում որոշակի կարգավիճակ ունեցող ուսանողներին:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավորի տարբերությամբ:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից բակալավրի և մագիստրոսի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:

Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշումը կնդունվի օրենքի ընդունումից հետո՝ 2 ամսվա ընթացքում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

««Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27[1] և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է առանց տարկետման իրավունքի, վճարովի հիմունքներով ԲՈՒՀ ընդունվողներին հնարավորություն ստեղծել ոչ մրցութային հիմունքներով, առանց ընդունելության քննություն հանձնելու, ԲՈՒՀ ընդունվելու համար:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է առանց փարկեփման իրավունքի, վճարովի հիմունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվողների համար հնարավորություն ստեղծել ոչ մրցութային հիմունքներով, առանց ընդունելության քննություն հանձնելու ընդունվել ԲՈՒՀ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է առանց տարկետման իրավունքի, վճարովի հիմունքներով բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվողներին հնարավորություն ընձեռել մասնակցել ընդունելությանը՝ ոչ մրցութային հիմունքներով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-636-13.10.2014-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ՝

«Բարձրագույն ուսումնական հաստատություններում, առանց տարկետման իրավունքի, վճարովի հիմունքներով բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու համար դիմորդները կարող են իրենց ընտրությամբ, առանց մրցույթի եւ ընդունելության քննություն հանձնելու, ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն: Ոչ մրցութային, վճարովի հիմունքներով առանց տարկետման իրավունքի ընդունված ուսանողների համար, բարձրագույն ուսումնական հաստատություններում արտոնություններ եւ ուսման վարձավճարների զեղչեր սահմանելու նպատակով, կարող են անցկացվել ներբուհական մրցույթներ:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2015թ.-ի հուվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է առանց տարկետման իրավունքի, վճարովի հիմունքներով ԲՈՒՀ ընդունվողներին հնարավորություն ստեղծել ոչ մրցութային հիմունքներով, առանց ընդունելության քննություն հանձնելու ընդունվելու ԲՈՒՀ: